նրա արտայայտութիւնները յաճախ լիքն են հակասութիւններով։

Ցողնած ու արիւնաքամ եղած Արեւմուտքը այժմ աւելի քան երբեք սիրում է էվոլիւցիայի կակուղ ու հանգստաւէտ օրէնքները. ծայրայեղ ընկերվարականներից սկսեալ մինչեւ ծայրայեղ աջակողմեաններ ժամանակակից հասարակական ու բարոյական փոթորկումների դարմանը փնտռում են էվոլիւցիայի մէջ, որը համարւում է մի տեսակ նախախնամական պատգամ, որովհետեւ բղխում է տնտեսական երկաթէ օրէնքներից։ Եւ ահա այս կախարդական, այս հզօր օրէնքներին կապեց իր յոյսը եւ քաղաքակիրթ Արեւմուտքը ռուսական առեղծբւածի հանդէպ եւ ազդերը թէեւ վարանումով, բայց հարեւանութեան ձեռք մեկնեցին բոլշեւիզմին, թողնելով, որ ժամանակը էվոլիւցիայի ճամբով ռուսական «խեւը խելքի բերի»։

Ցաբաբերութիւններ սկսուեցին. դիւանագիտական միսսիաներ փոխանակուեցին ու ազդից ազդ ընդունուած պարկեշտ սովորութիւններ կիրառուեցին։ Ռուսիան հին դրաւչութիւն ունի. հարուստ է ու շահագործումի կարելիութիւններն անսահման։

Մնացին միայն արտասահմանեան մամուլի մերթ բուռն կամ մեղմ, մերթ բարեացակամ կամ մաղձոտ քննադատութիւնները Մոսկուայի վարիչների հասցէին։ Երբեմն լուրեր հասան բոլշեւիզմի ծօտալուտ կործանումի մասին, դրքեր ու ուսումնասիրութիւններ հրատարակուեցին, թուերով ու վիճակագրութեամբ ապացուցեցին ծանրախոհ, տնտեսագէտ հեղինակներ, որ սովետական բեժիմը եւ հասարակակարգը ամէն օր, ամէն ժամ մեռնում է մաս-մաս, որ իրերի տրամաբանութեան մէջ թագնուած անյեղլի օրէնքները գործում են որպէս նիմեղիդա, որ մութ, դաղտնածածուկ գործօններ կան հասարակական շարժումների մէջ, որոնք շատ աւելի հզօր են քան բռնի յեղաշրջումները, որ սովետական Ռուսիան եւս, որչափ եւ իւրայատուկ լինին նրա պայմանները, չի կարող խուսափել եւ պէտք է դահավիժուի ինչպէս մի արտառոց կառուցուածք։

Սովետական բեժիմը չը կործանուեց. էվոլիւցիայի հետքն իսկ չկայ. անօրինակ բրոնութեան տակ հեծող ժողովուրդների տնքոցը երկինք է բարձրանում։

Առանց դատաստանի զնդակահարումները, աքսորները, մարդկային ամէն մի իրաւունքի ոտնահարումը, խղճի, խօսքի, ժողովների, մամուլի սանձահարումը, տմարդի ու վայրագ ջարդերը, տնտեսական արտառոց ու աւերիչ փորձերը շարունակւում են յանդուգն արհամարհանքով դէպի աշխարհի հասարակաց կարծիքն ու բողոքի աղաղակները։

* * *

Եւ այսպէս տասն տարուց ի վեր։

Էվոլիւցիայի յոյսերը ցնդեցին. քաղաքակիրթ երկրները ջղայնանում են. Արեւմուտքն ասես նոր-նոր ուշքի գալով, անհանգիստ ու խռովայոյզ ելք է փնտռում ընկերական ու քաղաքական այս աննախընթաց կնճիռից, որ իր հինաւուրց քաղաքակրթութեան հիմքերն է փորում։

Քաղաքական գործիչներ ու խորհող, հըմուտ հասարակաբաններ դարման են փնտռում բոլշեւիզմի ստեղծած այս ծանր տագնապին, վասնզի աշխարհը չի կարող խաղաղութիւն տեսնել քանի շարունակւում է ռուսական մըղձաւանջը։

Անգլիան իր բարքերին ու աւանդութիւնների անյարիր ու անծանօթ բրտութեամբ խըզեց իր դիւանագիտական յարաբերութիւնները Մոսկուայի հետ. Ֆրանսան, նոյն ընդհանուր ջղայնութեան հետեւանքով եւ առանց նոյնիսկ բաւարար պաշտօնական հիմքերի, ճամբայ դրեց սովետական դեսպանին մի կոչտութեամբ, որ պետութիւնների փոխյարաբերութեան մէջ անընդունելի եւ անսովոր է։

Դիւանագիտական յարաբերութիւններ խզելու պարզ սպառնալիք է այս։

Սովետների շուրջը թշնամութիւնն աճում է օրէ օր։ Միւս կողմից բուն Ռուսիայում համայնավար շեֆերը երէկ համերաշխ ու միաբան, այսօր հակամարտ են իրար դէմ. միապաղաղ կուռ ճակատը ճեղքուածներ է տուել, հակոտնեայ հոսանքները բաղխւում են իրար եւ վտանգաւոր ախտանշանները բազմանում։

Եւ ահա վերստին աշխարհն սպասում է սո-